«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան» (Եբր. 13:8):

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Դեկտեմբեր 2012

Մարանաթա, մեր Տեր, արի

«Մարանաթա»-ն վաղ եկեղեցու հավատացյալների գաղտնաբառն էր: Նրանք ապրում էին Քրիստոսի մոտալուտ վերադարձի ակնկալիքով և մեկ սիրտ ու մեկ հոգի ունեին: Դա նաև այն հույսն էր, որից նրանք կառչում էին հալածանքների ժամանակ, որոնք մեծ ուժգնությամբ սկսվեցին մեր թվարկության 63 թվականին Ներոն կայսեր ժամանակ: Ի վերջո, Տերը կանխասել էր այդ. *«Հիշեցեք այն խոսքը, որ ես ասացի ձեզ, թե՝ ծառան իր Տիրոջից մեծ չէ...»* և *«Եթե Ինձ հալածեցին, ձեզ նույնպես պիտի հալածեն...»* (Հովհ. 15:20):

Տիրոջ խոստացված վերադարձի (Հովհ. 14:1-3) կենդանի հույսը նաև ամենակարևոր թեման էր առաքյալների թղթերում և անկասկած քարոզներում նույնպես:

Հովհաննեսն այսպես էր քաջալերում հավատացյալներին. *«Եվ այժմ, որդյակներ, մնացեք Նրա մեջ.որ երբ Նա հայտնվի, մենք համարձակություն ունենանք և Նրա գալու պահին Նրա առջև չամաչենք»:* (1 Հովհ. 2:28):

Պետրոսը գրել է. *«Որովհետև մենք ոչ թե վարպետությամբ հնարված առասպելների հետևելով ձեզ ցույց տվեցինք մեր Տեր Հիսուս Քրիստոսի զորությունն ու գալուստը, այլ Նրա մեծափառությանն ականատես լինելով»* (2 Պետր.1:16):

Հակոբոսը հորդորում էր այս խոսքերով. *«Արդ, եղբայրներս, մինչև Տիրոջ գալուստը համբերող եղեք: Ահա մշակը համբերությամբ սպասում է հողի պատվավոր պտղին, մինչև որ առաջին ու վերջին անձրևն առնի»* (Հակոբ 5:7):

Պողոսը նույնիսկ վկայակոչում էր «ԱՅՍՊԵՍ է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքը. *«Որովհետև Տիրոջ խոսքով ձեզ սա ասենք, թե մեզնից նրանք, որ կենդանի են ու մնան մինչև Տիրոջ գալուստը, ննջեցյալներից առաջ չեն անցնելու»* (1 Թես. 4:15): Նկատեցինք, որ այստեղ խոսքը Նրա տարբեր գալուստներից մեկի մասին չէ, այլ Քրիստոսի վերադարձի խոստումի մասին:

Քրիստոսի խոստացված վերադարձը նաև Ուիլյամ Բրանհամի հիմնական թեման էր: Միայն 1963 թվականից՝ կնիքների բացումից ի վեր նա «Հարսի» մասին խոսել է 870 անգամ: Իր վերադարձի ժամանակ երկնային Փեսան Իր հետ տուն է տանելու միայն պատրաստված Հարսին: Ի վերջո մեր ժամանակների մարգարեական ծառայության նպատակն է ողջ կրոնական խառնաշփոթությունից աստվածային պատգամի միջոցով դուրս կանչել բոլոր ճշմարիտ հավատացյալներին և նրանց պատրաստել Քրիստոսի երկրորդ գալստի համար: Աստծո ողջ խորհուրդը այժմ հաղորդվել է եկեղեցուն, որպեսզի այն վերականգնվի իր սկզբնական վիճակին և վերջում լինի այնպիսին, ինչպիսին վաղ եկեղեցին է եղել սկզբում:

«Մարանաթա» կանչն արտահայտում է Քրիստոսի վերադարձին սպասող ճշմարիտ հավատացյալների փափագը: «Մարանաթա»-ն արամեերեն արտահայտություն է և բաղկացած է հետևյալ բառերից՝ «Մար»՝ Տեր, «անա»՝ մեր, «թա»՝ արի. «Մեր Տեր, արի»:

Կորնթացիներին ուղղված իր առաջին նամակի վերջին գլուխը Պողոսն ամփոփում է այս խոսքերով. *«Ես՝ Պողոս, իմ ձեռքով գրեցի այս բարևը: Եթե մեկը Տեր Հիսուս Քրիստոսին չի սիրում, նզովյալ թող լինի: Մարանաթա: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը ձեզ հետ լինի»:* (հհ. 21-23):

Կան մարդիկ, ովքեր սիրում են Տիրոջը, ընդունում են Նրա պարգևած Շնորհքը, հետևաբար՝ աստվածային օրհնությունը. *«Բայց ովքեր նրան ընդունեցին, նրանց, որ հավատում են նրա անվանը, իշխանություն տվեց նրանց Աստծո զավակներ լինելու»* (Հովհ.1:12): Եվ կան մարդիկ, որոնք մերժում են այն և մնում անեծքի տակ: Ամեն անձ ինքն է իր համար որոշում թե ուզում է ընդունել կատարված փրկագնումը: Աստված կամենում էր, որ բոլոր մարդիկ փրկվեն և գան ճշմարտության ճանաչմանը (1 Տիմ. 2:4): Բայց կփրկվեն միայն նրանք, ովքեր ընդունել են, որ իրենք կորսված են և կանչել են Տիրոջ անունը (Հռոմ. 10:13): *«Բոլոր մարգարեները նրա մասին վկայություն են տալիս, որ ամեն նրան հավատացողը նրա անունով մեղքերի թողություն կստանա»* (Գործք 10:43):

Գաղատ. 1:6-9 համարների համաձայն բոլոր նրանք ովքեր քարոզում են առաքյալների քարոզած ավետարանից տարբերվող այլ ավետարան, նույնպես անեծքի տակ են: Պողոս առաքյալի խոսքերը կայծակի պես հարվածում են և Ամենակարողի որոտման պես են. *«Բայց եթե մենք էլ կամ երկնքից մի ուրիշ հրեշտակ նրանից տարբեր բան ավետարանի, քան մենք ձեզ ավետարանեցինք, նզովված լինի»* (Գաղատ.1:8): Բոլոր քրիստոնեական եկեղեցիները, հարանվանությունները և դավանանքները, ինչպես նաև ամեն առանձին հավատացյալ, կանգնելու են դատաստանի առաջ:

Ինչպես ամեն արթնության ժամանակ, նրանց մեջ, ովքեր հիմա լսում են Մաղաք. 4:5,6 համարներում խոստացված, Մատթ. 7:11 և Մարկ. 9:12 համարներում մեր Տիրոջ կողմից հաստատված ծառայության միջոցով տրված դուրս գալու և վերականգման վերջին պատգամը, կան շատ կանչվածներ ու քիչ ընտրյալներ (Մատթ. 20:16): Այս ժամի կանչն է. *«Սիա փեսան գալիս է, դուրս եկեք նրան դիմավորելու»*: Բոլոր կույսերը լսում են այդ, բոլորն արթնանում են և կարգի են բերում իրենց ճրագները: Բայց կան իմաստուն կույսեր և հիմար: Իմաստունները ընտրյալներն են, նրանք ունեն Հոգու յուղը, Հոգու լեցունությունը իրենց կավե անոթներում (2 Կորնթ. 4:7) և Աստծո ամեն Խոսքը Կյանքի Հաց է նրանց համար (Մատթ. 4:4):

3 Թագ. 17:14 համարում հրաշալի այլաբանություն ենք գտնում Եղիայի ժամանակներից, որը վերաբերում է մեր ներկա ժամանակներին. *«Որովհետև այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. սափորում ալյուրը պիտի չվերջանա ու կուժից յուղը չպակասի, մինչև այն օրը երբ Տերը անձրև տա երկրի երեսին»*: Խոստացված վերջին անձրևը կգա, ինչպես առաջին անձրևը եկավ (Եսայի 44:3, Հովել 2:23, Զաքարիա 10:1, Գործք 2:14-21, Հակոբ 5:7 և այլ համարներ) և հոգևոր կերակուրի պակաս չի լինի (1 Տիմ. 4:6): Փրկագնվածներն ասում են Փրկչի հետ. *«Իմ կերակուրն այն է, որ ինձ ուղարկողին կամքն անեմ և նրա գործը կատարեմ»* (Հովհ.4:34):

Նա, ով հոժարությամբ ընդունում է Սուրբ Հոգու առաջնորդությունը (Հովհ. 16:13, Հռոմ. 8:14), բոլոր ոլորտներում ապրում է միանգամայն նորմալ կյանքով, բայց լրջորեն է վերաբերվում պատրաստությանը և ընդունում է փրկության խոստացված ժառանգությունը և վերջնականորեն կնքվում Սուրբ Հոգով (Եփես. 1:11-14, Գաղատ. 3:14): Փեսայի գալստյան ժամանակ նրանք պատրաստ կլինեն որպես Նրան ներկայացված Հարս-Խոսքը (2 Կորնթ. 11:2) և կգնան հարսանիքի խնջույքին:

Ճրագները, այսինքն, լուսավորությունը հիմար կույսերն էլ ունեն: Բայց պատրաստ չեն լինում, հավատում են նաև մարդկանց անմիտ մեկնություններին, մինչդեռ իմաստուն կույսերը հավատում են միայն Խոսքում գրվածին: Իսկապես սուրբգրային է միայն այն, ինչ գրված է Աստվածաշնչում: Եվ ամեն վարդապետություն հիմնված է երկու, երեք և ավելի սուրբգրային համարների վրա:

Իմաստուն կույսերը ունեն Հոգու լեցունությունը, որը դրսևորվում է Աստծո կատարյալ սիրով՝ Նրա հանդեպ սիրով, Նրա Խոսքի հանդեպ սիրով և միմյանց հանդեպ սիրով: Հետևյալ խոսքերը ակնհայտորեն վերաբերում են նրանց. *«Եվ սիրիր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, ամբողջ հոգով, ամբողջ մտքով ու ամբողջ զորությամբ». սա է առաջին պատվիրանը: Եվ երկրորդը սրա նման է. «Դրացուդ անձիդ պես սիրիր»: Սրանցից ավելի մեծ պատվիրան չկա»* (Մարկ.12:30,31): Այս երկուսը կապված են: Նա, ով ճշմարտապես սիրում է Աստծուն, սիրում է նաև իր եղբորը, նույնիսկ իր անձը զոհելու աստիճան:

Աշակերտը, ում Հիսուսը սիրում էր, լսել էր, թե Տերն ինչ է ասել Իրեն հակառակվողներին. *«Եթե ձեր Հայրն Աստված լիներ, ինձ կսիրեիք …»* (Հովհ. 8:42):

Իր աշակերտներին Տերն ասել է. *«Ձեզ նոր պատվիրան եմ տալիս, որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք: Դրանով բոլորը կիմանան, որ Իմ աշակերտներն եք, եթե իրար նկատմամբ սեր ունենաք»* (Հովհ.13:34, 35): Եվ *«Այս եմ պատվիրում ձեզ, որ դուք միմյանց սիրեք»* (Հովհ. 15:17): Շեշտը այս խոսքերի վրա է. «Ինչպես որ ես ձեզ սիրեցի»՝ հենց այդպես:

Հովհաննես առաքյալը նկարագրել է մեր հանդեպ Աստծո սերը և եղբայրական սերը, որը պետք է ունենանք միմյանց հանդեպ. *«Սրանով մենք իմացանք սերը, որ Նա Իր կյանքը տվեց մեզ համար, մենք էլ պետք է մեր կյանքը տանք մեր եղբայրների համար»* (1 Հովհ.3:16):

Իսկական, կյանքում ապրված աստվածային սերը միակ «տարբերանշանն է», որը ցույց է տալիս, որ մենք Նրա իսկական աշակերտներն ենք: Սերը երբեք բաժանություններ չի ստեղծում, նույնիսկ ամենածանր փորձությունների ժամանակ. սերը հաշտեցնում է և միավորում ցանկացած պարագայում, այն կատարելության կապն է (Կողոս. 3:14): Իմանալու համար, թե անձամբ յուրաքանչյուրիս վիճակն ինչպիսին է, պետք է նայենք Խոսքի հայելու մեջ (Հակոբ 1:19-27): Նա, ով նայում է հայելու մեջ, միայն իրեն է տեսնում, երբեք ուրիշին չի տեսնում:

1 Կորնթ. 13-րդ գլխում համակողմանիորեն նկարագրված է Աստծո սերը: Եթե նույնիսկ իմանայինք բոլոր խորհուրդները, խոսեինք մարդկանց ու հրեշտակների լեզուներով, նույնիսկ ունենայինք մարգարեության պարգևը և ողջ հավատքը, դա մեզ ոչ մի օգուտ չէր տա, եթե սեր չունենայինք: Գործի դրված սերը դրսևորվում է ինչպես գրված է. *«Սերը համբերող է, բարի է, սերը չի նախանձում, սերը չի գոռոզանում, չի հպարտանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտրում, հեշտությամբ չի գրգռվում, չար բան չի մտածում…»* (1 Կորնթ. 13:4-8): Նշված հատկություններից յուրաքանչյուրը կա ընտրյալների կյանքում: Այդպես պետք է լինի մեր կյանքը: Այդ ժամանակ թշնամին չի կարողանա այս հարցերում մեզ մեղադրել, որովհետև արդյունքը կլինի սա՝ *«Եվ կենդանի եմ, այլևս ոչ թե ես, այլ Քրիստոսն է իմ մեջ կենդանի»* (Գաղատ. 2:20): Նա է ապրում մեր մեջ: Ամեն բան կդադարի, նույնիսկ Հոգու պարգևները, բայց Աստծո սերը մնում է հավիտյան (1 Կորնթ. 13:8):

Աստված սեր է: Նա մեզ հայտնվեց Իր սիրով, Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ ու Փրկչի մեջ: *«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»* (Հովհ. 3:16): Աստծո սերը մեր սրտերում տարածված է Սուրբ Հոգու միջոցով (Հռոմ. 5:5) և դրսևորվում է մեր մեջ որպես Հոգու պտուղ (Գաղատ. 5:22-24): Այսպիսով բոլոր վերստին ծնված հավատացյալները մկրտված են որպես Քրիստոսի Մարմնի՝ Իր Եկեղեցու անդամներ:

Եկեղեցու առաջին շրջանի նամակում, Տերը հանդիմանեց հավատացյալներին իրենց առաջին սերը թողնելու համար (Հայտն. 2:4): Այժմ՝ վերջում, մենք պետք է վերադառնանք առաջին սիրուն: Ինչպես փեսան է հարսին սիրո առաջարկ անում, իսկ նա պետք է այն ընդունի իր կինը դառնալու համար, այնպես էլ ամեն անձ, ով ուզում է Հարս-Եկեղեցու մաս լինել, պետք է ընդունի երկնային Փեսայի սիրո առաջարկը, որպեսզի մասնակցի հարսանիքին և հետո հարսանիքի ընթրիքին (Հայտն. 19:7-9):

7-րդ համարում գրված է. «… *որ Գառան հարսանիքը եկավ»*: 9-րդ համարում կարդում ենք. *«Երանելի են Գառան հարսանիքի ընթրիքին կանչվածները»*: Հարսանիքն ու հարսանիքի ընթրիքը միասին են: Դրան հաջորդում է այս հաստատումը. *«Սրանք Աստծո ճշմարիտ խոսքերն են»*: Սրտանց ասում ենք «ամեն»:

Փրկագնվածների կատարելությունը կիրականանա Աստծո սիրով, Հոգու զորավոր գործով, ինչպես եղել է սկզբում և դրանում ներգրավված կլինեն նրանք, *«ովքեր սիրեցին Նրա հայտնությունը»* (2 Տիմ. 4:8): Միայն նրանք ենք լցված երկնային Փեսային հաճելի լինելու փափագով և ամբողջ սրտով կանչում են. «Մարանաթա, մեր Տեր, արի»:

Թող ամեն մարդ ին անձը քննի

«Սիրելիներ, հիմա Աստծո որդիներ ենք, և տակավին հայտնված չէ, թե ինչ պիտի լինենք, բայց գիտենք, որ երբ նա հայտնվի, Նրա նման կլինենք, որովհետև կտեսնենք նրան, ինչպես որ է: Եվ ամեն որ,ով այս հույսն իր մեջ ունի, իր անձը մաքրում է, ինչպես որ նա է մաքուր» (1Հովհ.3:2,3): Այո, երբ Նա հայտնվի: Դրան ենք մենք սպասում: Բայց միայն եթե Քրիստոսը հայտնված է մեր կյանքում, մենք Նրա հետ կհայտնվենք փառքով (Կողոս. 3:1-4):

Մենք հասել ենք փրկության ողջ ծրագրի ամենակարևոր փուլին և շնորհքով կարող ենք մասնակցել այն բանին, ինչ Աստված անում է ներկայում: Մեր նպատակն է հավատալ, ապրել և ամեն բան սովորեցնել Սուրբ Գրքի համաձայն: Մենք լրջորեն ենք ընդունում այս նախազգուշացումը. *«Զգուշացեք ձեր անձերից, միգուցե ձեր սրտերը ծանրանան շատակերությամբ, հարբեցողությամբ, այս կյանքի հոգսերով և այդ օրը անսպասելի գա ձեզ վրա»* (Ղուկաս 21:34):

Շատ կարևոր են մեզ համար այս անձնական հորդորները. *«Զգուշացեք ձեր անձերի համար»* (Ղուկաս 17:3) և *«Բոլորի հետ հետամուտ եղեք խաղաղության և սրբության, առանց որի ոչ ոք Տիրոջը չի տեսնի»* (Եբր.12:14): Հավատացյալների մեջ ամեն բան պիտի կարգավորվի ներման և հաշտության միջոցով (Կողոս. 3:12-17):

Միայն նա, ով ապրել է իսկական դարձ և նորոգություն աստվածաշնչյան օրինակի համաձայն՝ *«Ոչ այն արդարության գործերի համար որ մենք արեցինք այլ Իր ողորմության համաձայն փրկեց մեզ՝ վերստին ծննդի ավազանով և Սուրբ Հոգու նորոգությամբ»*: (Տիտոս 3:5), միայն նա կարող է ասել. *«Եվ կենդանի եմ, այլևս ոչ թե ես, այլ Քրիստոսն է իմ մեջ կենդանի»*: Միայն այն ժամանակ, երբ ազատվել ենք մեր «հին մարդուց», մեր «ես ուզում եմ»-ից, կարող ենք մեր հոգու խորքում հագնել նոր մարդուն՝ «Ինչպես Դու ես կամենում» (Եփես. 4:22-29): Իր մարմնեղեն մարմնում մեր Փրկիչն ապրեց նոր աստվածային կյանքով, որպես օրինակ մեզ համար. *«Բայց ոչ թե ինչպես ես եմ ուզում, այլ ինչպես Դու կկամենաս»:* (Մարկ. 14:36): Հիրավի Նա չարչարվեց ու Իր վրա վերցրեց մեր մեղքերն ու անօրենությունները որպեսզի մեզ Իր առջև կանգնեցնի, սուրբ, անբիծ և անարատ (Կողոս. 1:22, Եփես. 5:27):

Բավական չէ միայն խոսել և գրել Հարս-Եկեղեցու և հափշտակության մասին, եթե նաև սուրբ անկեղծությամբ չենք հիշատակում այն բաները, որոնք մարդուն կզրկեն Աստծո թագավորությունից և հափշտակությունից: Տերն արդեն ասել էր Իսրայելին. *«Եվ եթե իրավ*

Իմ ձայնին լսեք և Իմ ուխտը պահեք, այն ժամանակ դուք ինձ համար սեփական ժողովուրդ կլինեք ամեն ազգերից, որովհետև իմն է բոլոր երկիրը» (Ելից 19:5,6): Նոր Կտակարանում այն աշակերտը, ում Հիսուսը սիրում էր, գրել է. *«Նրան, որ մեզ սիրեց ու մեր մեղքերց լվաց մեզ Իր արյունով և մեզ Աստծո ու Իր Հոր համար թագավորներ ու քահանաներ արեց, Նրան փառք և զորություն հավիտյանս հավիտենից: Ամեն»* (Հայտն.1:5-6, 5:9,10):

Նա, ով ուշադիր կարդում է Սուրբ Գիրքը՝ թե Հին, թե Նոր Կտակարանը, կնկատի, որ սրբացումը հնարավոր է միայն բոլոր ոլորտներում հնազանդությամբ Աստծո Խոսքով ապրելով: Մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեզ փրկագնել է և ազատել ամեն մեղքից, ամեն անօրենությունից, ամեն անեծքից: Փրկագնվածները չեն խոսում «անսահման շնորհքի» մասին, այլ կատարում են Խոսքը: Նրանք կատարում են ամեն բան, ինչ Տերը պատվիրել է Իր Խոսքում: *«Որպես հնազանդ զավակներ, վարվելով ոչ թե ըստ ձեր նախկին՝ տգիտության ժամանակների կրքերի, այլ ինչպես ձեզ Կանչողը սուրբ է, դուք էլ ձեր ամբողջ վարքով սուրբ եղեք: Քանի որ գրված է. «Սուրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ»* (1 Պետր. 1:14-16):

Աստված պահանջում է կարգուկանոն և սրբություն Իր Եկեղեցում: Անհավատությունն ու անհնազանդությունը բացարձակապես չեն կարող կանգնել Նրա առջև (Եբր. 3:18,19): Պողոսը իր նամակներից շատերում ցույց տվեց այն բաները, որոնք ցանկացած մարդու կզրկեն Աստծո թագավորությունից: Մի տեղ նա նույնիսկ թվարկեց 15 «մարմնի գործերը», որոնք են՝ շնություն, պոռնկություն, պղծություն, անբարոյություն, կռապաշտություն, կախարդություն, ատելություն, կռիվ, չարակամություն, բարկություն, հակառակություն, երկպառակություններ, բաժանումներ, նախանձություններ, սպանություններ, հարբեցողություն, անառակություններ: Բայց դրանից առաջ հստակ ասել է որ Հոգով քայլողը «մարմնի ցանկությունը չի կատարի» (Գաղատ. 5:16-21): Հաստատ է, որ մարմնի գործերը կատարողներից ոչ մեկը հափշտակությանը չի մասնակցելու: Արժե նայել Խոսքի հայելու մեջ և այդպիսի սուրբգրային համարները նորից կարդալ:

Ամեն ճշմարիտ հավատացյալ, որը պատկանում է Գառնուկի Հարսին, լինի դա տղամարդ թե կին, տղա թե աղջիկ, մաքրում է իր անձը, ինչպես Նա է մաքուր: Ուրեմն ոչ մի հավատացյալ տղամարդու, հավատացյալ կնոջ, նույնիսկ հավատացյալ երեխայի մեջ չի լինի անգամ նվազագույն ներքին հակառակություն Աստծո Խոսքի հանդեպ:

«Կանայք, ձեր ամուսիններին հնազանդ եղեք, ինչպես վայել է Տիրոջով: Ամուսիններ, սիրեք ձեր կանանց ու դառը մի եղեք նրանց դեմ: Զավակներ, ձեր ծնողներին ամեն բանում հնազանդ եղեք, որովհետև դա հաճելի է Տիրոջը» (Կողոս. 3:18-20):

Նա, ով անդրանիկների եկեղեցու անդամ է, խաչված է Քրիստոսի հետ, և նոր կյանք է ստացել Նրա հարությամբ, ընդունում է Աստծո Խոսքը և թույլ է տալիս, որ այն ուղղի ցանկացած թերություն:

Եկեղեցու շինության համար Աստված ծառայություններ է հաստատել՝ « *... սրբերի կատարելության համար, ծառայության գործի համար...»* (Եփես. 4:11-16): Երբ կարդում ենք 1 Կորնթ. 12-4-11 համարները, նկատում ենք, որ Հոգու ինը պարգևները նույնպես այդ նպատակին են ծառայում: 12-26 համարներում շեշտվում է Քրիստոսի Մարմնի անդամների բացարձակ միությունը, իսկ 27-31 համարներում նորից Եկեղեցին ներկայացվում է որպես Քրիստոսի Մարմին, որում Աստված Ինքը նշանակել է առաքյալներ, մարգարեներ, վարդապետներ և այլն: Նա, ով չի հարգում սա, հոգևորապես կույր է, անարգող և արհամարհող (Թվոց 16:30, Գործք 13:41), և նա, ով իրեն առանձնացնում է Եկեղեցուց,

ընկնում է սխալ ներգործության տակ, Հոգին այլևս նրա հետ չի կարող խոսել, և նա քայլում է իր սեփական ճանապարհներում: Ի վերջո, Տերը չէր շրջում յոթ աշտանակներից դուրս (Հայտն. 2:1): Պատգամին հետևող այն հավատացյալները, որոնք միմյանց հետ հաղորդակցություն չունեն, միասին օրհներգներ չեն երգում, միասին չեն մասնակցում Տերունական Ընթիքին, ինչպե՞ս կարող են նույնիսկ համարել, որ Հարսի մասնիկ են, հաղթողների շարքում են, ինչպե՞ս կարող են մտածել, որ նրանց կթույլատրվի միասին տոնել հարսանիքի ընթրիքը երկնքում և միասին երգել Գառնուկի երգը:

Այստեղ արդեն ակնհայտ է դառնում՝ արդյոք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցու անդամ ենք թե՞ որևէ կրոնական միության: Նաև պետք է նշել, որ Աստծո կողմից հաստատված ծառայությունը երբեք բաժանումներ չի առաջացրել մինչև հիմա, որովհետև Աստծո նշանակած բոլոր ծառայությունները տրվել են Եկեղեցու շինության համար, ոչ թե քանդելու: Ոչ էլ երբևէ ճշմարիտ վարդապետությունը բաժանումներ է առաջացրել: Միայն ինքնակոչ քարոզիչներն են իրենց կամայական մեկնություններով սուտ ուսմունքներ բերում, որոնք էլ տանում են պառակտումների: *«Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, որ ճանաչեք նրանց, ովքեր ձեր սովորած վարդապետությունից դուրս բաժանումներ ու գայթակղություններ են առաջ բերում, և հեռու մնացեք նրանցից»* (Հռոմ. 16:17):

Գառնուկի Հարսին պատկանող ոչ մի անձ չի արհամարհի երբեք Խոսքը և ուխտի Արյունը, այլ կջանա հարմարվել Սուրբ Գրքին և ապրել Սուրբ Գրքի համաձայն: Հարսը հիմա լսում է վերջին պատգամը, որը նախորդում է Քրիստոսի երկրորդ գալստին, դուրս է գալիս, զատվում և պատրաստվում, որ վերջում լիակատար համաձայնության մեջ լինի Փեսայի հետ, Խոսքից դուրս չլինի ոչ մի տեսանկյունից, անհնազանդ չլինի նույնիսկ մեկ կետում: Նա չի ընդունում ոչ մի փոխզիջում, ոչ մի խառնուրդ: Նրա բացարձակ իշխանությունը Աստծո Խոսքն է՝ Հին և Նոր Կտակարանները:

Ընտրյալներից ոչ մեկը չի խախտի առաջին պատվիրանը և չի ունենա այլ աստվածներ, միակ Աստծուն՝ էլոհիմ Յահվեին չի փոխի երեք հավիտենական, երեք ամենակարող, երեք ամենագետ աստվածների հետ, ոչ մեկը չի ստեղծի ինչ-որ խորհրդանիշ կամ նկար, ընտրյալներից ոչ մեկը խաչի նկարին չի նայի (2 Օրինաց 27:15), այլ նրանք կերկրպագեն Աստծուն միայն Հոգով և ճշմարտությամբ, Հիսուս Քրիստոսի Անունով (Հովհ. 4:24):

Ընտրյալներից ոչ մեկը չի չարաշահի Տեր Աստծո Սուրբ Ուխտի Անունը՝ Յահվե կամ Յահշուա՝ Հիսուս: Ոչ մեկը Կայենի նման չի սպանի, չի վարկաբեկի կամ զրպարտի: Իսկապես փրկագնվածներից ոչ մեկը չի խախտի Տասը պատվիրանները կամ Ղևտ. 20-րդ գլխում և 2 Օրինաց 27:15-26 համարներում նշված պատվիրանները: Ընտրյալների մեջ չկան նաև նույն սեռի զույգեր, ո՛չ տղամարդիկ, ո՛չ կանայք (Հռոմ. 1:24-32): Աստված Ինքն է հաստատել ամեն բան բոլոր ոլորտներում և մեզ ներքին զորություն է տալիս հնազանդությամբ ապրելու, որ հարգենք աստվածային ողջ կարգը, թե՛ հոգևոր, թե՛ մարմնավոր ոլորտներում:

Տարբերանշանը

«Սրանով են հայտնի Աստծո որդիները և սատանայի որդիները: Ամեն ոք, ով արդարություն չի անում, Աստծուց չէ, և <u>ոչ էլ նա, ով իր եղբորը չի սիրում: Քանի որ սա այն պատվիրանն է,</u> որ դուք ի սկզբանե լսել եք, որ պետք է սիրեք միմյանց» (1 Հովհ.3:10,11): Այս համարը հստակ

ցույց է տալիս, թե ինչով են ճանաչվում Աստծո զավակները և սատանայի զավակները (Մատթ. 13:38): Տարբերիչ նշանը եղբայրասիրությունն է: Մենք էլ ենք ի սկզբանե լսել այդ պատվիրանը: Ու՞ր է մեզ տանում Խոսքը: Իր կյանքի ընթացքում պատգամաբերը մի անգամ փոխադրվեց դրախտ և այնտեղ լսեց ամեն բան թափանցող այս խոսքերը. «Միայն կատարյալ սերը կմտնի այստեղ»:

Իսկապես դա շատ լուրջ է: *«Ամեն ոք, ով իր եղբորն ատում է, մարդասպան է, և գիտեք, որ ամեն մարդասպան իր մեջ հաստատված հավիտենական կյանք չունի»* (1 Հովհ.3:15): «Եղբորն ատողը» մարդասպանին հավասար է. դա գալիս է Կայենի ժամանակվանից (Ծննդոց 4): Ատելությունը սիրո հակառակն է, ատելությունը մերժում է, սերն՝ ընդունում: Այո, Տերը խոսում է էլ ավելի համառորեն. *«Եթե մեկն ասում է. «Ես սիրում եմ Աստծուն», և ատի իր եղբորը, նա ստախոս է, քանի որ եթե չի սիրում իր եղբորը, ում տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, ում չի տեսնում»* (1 Հովհ. 4:20): Ընտրյալները այդ խոսքերը ընդունում են սրտում և քննում են իրենց իրենց: Բոլոր մյուսները կարծում են, որ դա իրենց չի վերաբերում: Նրանք կշարունակեն սիրել Կայենի ձևով: (1 Հովհ. 3:12): Կայենն ու Աբելը եղել են նույն արգանդում, ինչպես Եսավը և Հակոբը, բայց մեկն ընդունվեց, մյուսը՝ մերժվեց: Հափշտակության ժամանակ երկուսը կլինեն մի անկողնում, մեկը կվերցնի, մյուսը կթողնվի (Ղուկաս 17:34):

Եսավի և Հակոբի օրինակով Աստված ցույց տվեց թե Իր տեսանկյունից ինչ են ընդունելն ու մերժելը, սերն ու ատելությունը: *«Տիրոջ Խոսքի պատգամը Իսրայելի մասին՝ Մաղաքիայի ձեռքով: Ես ձեզ սիրել եմ, ասում է Տերը, իսկ դուք ասում եք. Ինչո՞վ ես սիրել մեզ: Մի՞թե Եսավը եղբայրը չէ Հակոբին, ասում է Տերը, և ես Հակոբին եմ սիրել իսկ Եսավին ատել եմ»* (Մաղաք.1:1-3, Հռոմ.9:13):

Հակոբն ուզում էր ունենալ անդրանիկության իրավունքը, որն ի սկզբանե կրում էր օրհնությունը (Ծննդոց 25:29-34): Եսավի համար դա ոչինչ էր, իսկ Հակոբն այն ուզում էր ամեն գնով: Աստված սեր է: Եսավի հանդեպ նրա ատելությունը մերժումն էր: Նա Ինքն ասաց. «Հակոբին սիրեցի՝ ընդունեցի, Եսավին ատեցի՝ մերժեցի»: Նախ Եսավը մերժեց Աստծուն՝ չգնահատելով անդրանիկության իրավունքը: Հետո սկսեց հալածել Հակոբին: Հիմա էլ այդպես է: Նա, ով հրաժարվել է անդրանիկության իրավունքից կամ չի ստացել այն, հալածում է նրան, ով շնորհքով դա ստացել է: Երբեք հակառակը չի եղել:

Աստված կամայականորեն չի գործում, բայց ոչ էլ որևէ մեկին ստիպում է ընդունել անդրանիկության իրավունքի օրհնությունը, որը կարող ենք ունենալ միայն Հիսուս Քրիստոսով, ով անդրանիկն է շատ որդիների մեջ (Հռոմ.8:28-30): Հակոբը գոտեմարտեց Աստծո հետ և աղաղակեց. *«Չեմ թողնի քեզ, մինչև ինձ չօրհնես»* (Ծննդոց 32:26): Խաբողը դարձավ Իսրայել՝ Աստծո հետ գոտեմարտող: Աստծուց ծնվածը անդրանիկության իրավունք ունի և նոր արարած է Քրիստոսի մեջ (2 Կորնթ, 5:17):

Հավիտյան ճշմարիտ է սա՝ Աստծուց ծնվածը հավատում է Աստծուն և Իր Խոսքին և չի կարող անհավատությամբ մեղանչել, որովհետև *«Աստծուց է ծնված»* (1 Հովհ. 3:9): Անհավատության և դրա հետ կապված անհնազանդության սկզբնական մեղքի հարցը մեկընդմիշտ լուծված է ճշմարիտ հավատքի և հնազանդության միջոցով: Աբրահամը հավատաց (Ծննդոց 15:6) և հնազանդվեց Աստծուն (Ծննդոց 22:16): Նույն կերպ, Աբրահամի սերունդը հիմա հավատում և հնազանդվում է Աստծուն (Գաղատ. 3:6-20, Հակոբ 2:21-26): Ինչքան որ հաստատ է, որ օձի գլուխը ջախջախվել է (Ծնն. 3:15) և մեր հավատքը հաղթել է աշխարհին (1 Հովհ. 5:4),

նույնքան հաստատ է, որ մենք ստացել ենք աստվածային բնությունը՝ Հիսուս Քրիստոսի բնությունը վերստին ծնունդի միջոցով և *«Իր սերմը մնում է մեր մեջ»*:

Ի՞նչ է աստվածային սերմը: Սերմը Աստծո Խոսքն է, որի մեջ գտնվում է կյանքի սաղմը (Ղուկաս 8:11): Աստծո ճշմարիտ զավակները մնում են Խոսքի մեջ. պարարտ հողի մեջ ցանված (Մարկ. 4:26-29) Խոսքը սաղմ է տալիս, պտուղ և մնում է նրանց մեջ (Հովհ.15:5-7): *«Նա կամենալով ծնեց մեզ ճշմարտության խոսքով, որ մենք նրա արարածների երախայրին լինենք»* (Հակոբ 1:18): Գրված Խոսքը դարձավ բացահայտված Խոսք (Հռոմ. 10:16,17), որի միջոցով մենք վերստին ծնվեցինք կենդանի հույսի համար (1 Պետրոս 1:3, 23): *«Բայց ով պահում է Նրա Խոսքը, իսկապես նրա մեջ կատարյալ է Աստծո սերը…»* (1 Հովհ. 2:5) և *«Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել: Եթե սիրում ենք միմյանց, Աստված մեր մեջ է բնակվում, ու Իր սերը մեր մեջ կատարյալ է»* (1 Հովհ. 4:12): Կատարյալ է մեր մեջ մինչև վերջը: Ամեն:

Ո՛հ, այսպիսի խոսքերը խորապես թափանցում են մեր սրտերը: Միայն Աստծո սիրով են Հարս-եկեղեցուն պատկանողները հասնում կատարելության, որովհետև մեր ժամանակների մարգարեին ասվեց, որ միայն կատարյալ սերը կմտնի այնտեղ:

Աստվածային պատգամը՝ ավետարանական, վարդապետական և մարգարեական մասերը, ինչպես նաև փրկության փորձառությունները այսօր նույնն են ինչպես եղել են առաքյալների օրերում: Առաջին և վերջին քարոզները, առաջին և վերջին մկրտությունները պետք է նույնը լինեն (Գործք 2:37-42): *«Մեկ Տեր, մեկ հավատ, մեկ մկրտություն…»* (Եփես.4): Աստծո բոլոր զավակների համար հիմնական պատվիրանը միշտ մնում է սերը, որը կիրառվում է որպես տարբերիչ նշան, որ Աստված հավիտյան բնակվում է մեզանում; Մնացած ամեն բան ունայն հայտարարություններ են, կրոնական ենթադրություններ ու պատրանքներ: Միշտ գոյություն ունեն երկուսը՝ տեսությունն ու իրականությունը: Կա, օրինակ, դարձի և վերստին ծննդյան վարդապետությունը և կա դարձի և վերստին ծննդյան անձնական փորձառությունը: Իսկապես վերստին ծնված Աստծո զավակը կունենա Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու կյանքն ու բնությունը և կբերի Սուրբ Հոգու պտուղները:

Երբ է Մարդու Որդին հայտնվում և երբ է գալիս

Մատթ. 24-րդ, Մարկ. 13-րդ, Ղուկաս 17-րդ և Ղուկաս 21-րդ գլուխներում մեզ ասվում է, թե ինչ է կատարվում վերջին ժամանակաշրջանում, երբ Մարդու Որդին հայտնվում է և ինչ է կատարվում, երբ գալիս է: Մեր ժամանակներում Նա հայտնվեց այնպես, ինչպես նախկինում Իր ծառայության ընթացքում, երբ քայլում էր երկրի վրա: Նա իջավ ամպով և կրակի սյունով, Նա գտավ մի անոթ, որի միջոցով բացահայտվեց որպես մարդու որդի մարգարեական ծառայության տարիների ընթացքում:

1946 թվականի մայիսի 7-ին երկնային պատգամաբերը ճշտությամբ ասաց Բրանհամ եղբորը, թե ինչ է տեղի ունենալու իր ծառայության մեջ: Մեսիայի նույն մարգարեական նշանը որպես Մարդու Որդի (Հովհ. 1, Հովհ. 4, Հովհ. 5:19) մեր ժամանակներում նորից կատարվեց հեթանոսների եկեղեցում, ինչպես նախկինում հրեաների և սամարացիների մեջ: Բրանհամ եղբայրն այդ մասին խոսել է ամեն բժշկության ծառայությունից առաջ: Նա դա համեմատեց այն բանի հետ, ինչը կատարվեց Սոդոմում, երբ Տերն այցելեց Աբրահամին (Ծննդոց 18): Այդ մասին կարելի է մանրամասն կարդալ նրա քարոզներում: Ես ինքս անձամբ դրան ականատես և վկա եմ եղել 1955-1965 թվականներին:

Մինչդեռ Հիսուս Քրիստոսի վերադարձը կլինի հանկարծակի ինչպես Նրա համբարձումը եղավ: Նա անձամբ դա հաստատեց՝ ասելով. *«Որովհետև ինչպես կայծակն է դուրս գալիս*

արևելքից և երևում մինչև արևմուտք, այնպես էլ կլինի Մարդու Որդու գալուստը» (Մատթ. 24:27): *«Հանկարծակի, մեկ ակնթարթում՝ վերջին փողի ժամանակ, որովհետև փողը կհնչի, մեռելները հարություն կառնեն առանց ապականության , և մենք կփոխվենք»* (1 Կորնթ. 15:52)

Սաղմոս 47:6-ը Հին Կտակարանի հարյուրից ավելի մարգարեություններից մեկն է, որն իրականացավ Քրիստոսի առաջին գալստյան ժամանակ. *«Աստված ցնծության գոչյուններով վեր բարձրացավ, Տերը՝ շեփորի ձայնով»* (Սաղմոս 47:5): Որպես հաղթող, հարուցյալ Տերը մարմնով համբարձվեց երկինք հաղթական գոչյունով ու փողի ձայնով և կատարվեց այս Խոսքը. *«Ո՛վ դռներ, բարձրացրեք ձեր գլուխները և բարձրացրեք, ով հավիտենական դռներ, որ փառաց Թագավորը մտնի: Ո՞վ է այդ փառաց Թագավորը: Տերը՝ զորավոր և ուժեղ: Տերը՝ ուժեղ պատերազմի մեջ»*: (Սաղմոս 24:7,8): Այդ ժամանակ Տերը փառքի մեջ տարավ նաև Հին Կտակարանի սրբերին, որոնք Իր հետ հարություն առան (Մատթ. 27:5-54): Գործք 1:9-11 համարների համաձայն, նույն հարուցյալ Տերը կվերադառնա այնպես ինչպես գնաց երկինք (Ղուկաս 24:51):

Սաղմոս 47:6-ում գրված նույն՝ «աղաղակ» բառը նորից գտնում ենք 1 Թես. 4:16 համարում (Անգլերեն թարգմանության մեջ Սաղմ. 47:6-ում և 1 Թես. 4:16-ում գրված է «աղաղակ» բառը - ծան. թարգմ.): Տերն Ինքը կիջնի աղաղակով, հաղթության աղաղակով: Ինչպես Ղազարոսի հարության ժամանակ, որտեղ ասվում է՝ *«Եվ այս ասելով՝ մեծ ձայնով աղաղակեց.«Ղազարոս, դուրս եկ»*: (Հովհ. 11:43), այդ ժամանակ էլ նախ կլինի ննջեցյալների հարությունը: 1 Թես. 4:13-18 համարների համաձայն Նա նորից մարմնով կգա հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով: Երբ Նրա ազդարարության հրամանը հնչի, Քրիստոսով ննջածները առաջինը հարություն կառնեն և հետո ողջ մնացածները կփոխվեն մահկանացու վիճակից անմահության:

Փրկագնողի հաղթությունը նաև փրկագնվածների հաղթությունն է: Նրա հարությունը մեր հարության երաշխիքն է: Նրա մարմնի փոխվելը մահկանացու վիճակից անմահության, Նրա համբարձումը, Նրա հետ կատարված ամեն բան մեզ հետ էլ կկատարվի: Պողոս առաքյալն այդ մասին գրել է. *«Որովհետև պետք է, որ այս ապականացուն անապականություն հագնի, և այս մահկանացուն՝ անմահություն հագնի: Եվ երբ այս ապականացուն անապականություն հագնի և այս մահկանացուն՝ անմահություն, այն ժամանակ կկատարվի այն խոսքը, որ գրված է. «Մահը կուլ գնաց հաղթության»* (1 Կորնթ. 15:53. 54)

Հափշտակությունը կլինի բացարձակ, վերջնական հաղթանակը, փրկագնման գործի պսակը, որին կմասնակցեն բոլոր նրանք, ովքեր Գառնուկի Հարսին են պատկանում: Դա կլինի կատարյալ աստվածային իրականություն, և մենք միշտ Տիրոջ հետ կլինենք: (1 Թես. 4:17): Կկատարվի Հովհ. 14:1-3 համարներում տրված խոստումը. *«... նորից կգամ ու ձեզ ինձ մոտ կվերցնեմ: Որպեսզի ուր որ ես եմ, դուք էլ լինեք»* (Հովհ. 14:1-3): Խոստումի զավակները (Գաղատ.4:28) հավատում են Աստծո բոլոր խոստումներին, որոնք «այո» և «ամեն» են (2 Կորնթ. 1:20-22):

Այն ժամանակ կլինի մեծ ուրախություն, ինչպես Պետրոսն է գրել. *«... որպեսզի Նրա փառքի հայտնության պահին էլ ցնծաք և ուրախանաք»* (1 Պետր. 4:13բ):

«Եվ ես լսեցի կարծես մի բազմության ձայն, և կարծես շատ ջրերի ձայն, սաստիկ որոտմունքի ձայնի նման, որ ասում էր. «Ալելուիա, որովհետև Ամենակալ Տեր Աստվածը թագավորեց: Խնդանք և ուրախ լինենք ու փառք տանք Նրան, որ Գառան հարսանիքը եկավ, և նրա կինը պատրաստեց իրեն »(Հայտն.19:6,7):

Ամեն բան կատարյալ իրականություն կդառնա: Նա, ով իսկապես ծնված է Խոսք-Սերմից և Հոգու միջոցով, նա, ով ծնված է Աստծուց, հավատում է ճիշտ այնպես, ինչպես Սուրբ Գիրքն է ասում: Գոհություն Աստծուն, որ մենք կարող ենք ճիշտ, այսինքն, աստվածաշնչյան ձևով դասավորել այս երկու բաները՝ «երբ Նա հայտնվում է» և «ինչ է կատարվում երբ Նա գալիս է»: Նա դրա համար մեզ պարգևել է Իր Շնորհքը և մենք սրտանց ընդունել ենք որ *«...Գրքերի ամեն մարգարեություն իր հատուկ մեկնությունը չունի...»* (2 Պետր.1:20): Ամեն սեփական մեկնություն սուտ է, հայհոյություն:

Նա, ով սովորեցնում է, որ Կնիքները բացելուց հետո շնորհաց աթոռը դարձել է դատաստանի աթոռ, և Տերը իջնում է կամ արդեն եկել է, սարսափելի մոլորության զոհ է դարձել, ինչպես նաև դրան հավատացողները: Դեռևս շնորհքի ժամանակաշրջանն է, դեռևս արյունը խոսում է մեզ համար (Կողոս.1:14, Եբր. 9:14), որպես Նրա դեսպաններ դեռևս աղաչում ենք. *«Հաշտվեցեք Աստծո հետ»* (2 Կորնթ. 5:20), դեռևս մեղավորները փրկվում են: Նա դեռևս պահանջում է Իրեն պատկանողներին, որոնք սահմանված են հավիտենական կյանքի համար (Գործք 13:48): Պատգամը, որը նախորդում է Քրիստոսի երկրորդ գալստին, ընդգրկում է լիակատար փրկությունը:

Այն, ամենը ինչ պատգամաբերն ասել է, պետք է ճիշտ դասավորվի Աստվածաշնչի համաձայն: Գրավոր Խոսքը, որը միշտ, նորից ու նորից Բրանհամ եղբայրը վկայակոչել է որպես իր բացարձակ հիմք, մեր ունեցած միակ բացարձակ հիմքն է: Նա, ով Աստվածաշնչի համաձայն չի դասավորում նրա ասածները, անխուսափելիորեն սխալ կմեկնաբանի նրա մեջբերումները և կմոլորեցնի մարդկանց: Դա է պատճառը, որ զանազան խմբավորումներ են առաջացել վերջին ժամանակների պատգամի շրջանակներում: Բայց այնտեղ, որտեղ սուտ ուսմունք կա, Աստված չի կարող ներկա լինել, որովհետև Աստված բացարձակ ճշմարտությունն է. *«...որպեսզի ճշմարիտը ճանաչենք և ճշմարիտի մեջ ենք, այսինքն Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ: Նա է ճշմարիտ Աստվածն ու հավիտենական կյանքը»* (1 Հովհ.5:20): Պաշտամունքն ու երկրպագությունը իզուր են, երբ մարդկանց պատվիրաններ են սովորեցնում (Մատթ.15:8,9, Մարկ. 7:6,7): Նման դեպքերում ճշմարիտ Աստվածը նույնիսկ կարող է չլսել: Ճշմարիտ երկրպագությունը սուրբ նախապայման է. *«Աստված Հոգի է ու նրան երկրպագողները պիտի հոգով ու ճշմարտությամբ երկրպագեն»* (Հովհ.4:24) :

Հաճելի լինել Աստծուն հափշտակությունից առաջ

«Հավատքով Ենովքը փոխադրվեց, որ մահ չտեսնի, ու չէր գտնվում, որովհետև նրան Աստված փոխադրեց, և իր փոխադրվելուց առաջ վկայվեց, <u>որ Աստծուն հաճելի էր</u>» (Եբր.11:5):

Ենովքը՝ Ադամից հետո յոթերորդը Աստծուն հաճելի էր, և հանկարծակի հափշտակվեց: Նույն կերպ, բոլոր նրանք, ովքեր հիմա ողջ են ու հափշտակվելու են առանց մահ տեսնելու, պետք է Աստծո առաջ հաճելի լինեն: Հին Կտակարանում կային քավության զոհեր (Ելից 29 և այլ համարներ), նաև գոհության պատարագներ Աստծուն հաճելի լինելու համար և երախայրի որայի ընծայումը. *«Եվ նա Եհովայի առաջին երերացնելով՝ մատուցանի որան, որ <u>ձեզ համար ընդունելի լինի.</u> քահանան շաբաթի հետևյալ օրը երերացնելով մատուցանի այն»*: (Ղևտ. 23: 11): Աստծո ժողովրդին Նրան ընդունելի՝ հաճելի դարձնելու համար Տիրոջ առաջ երերացնում էին երախայրի որան. նախ՝ ցորենը, հետո՝ որան և այնուհետև երախայրի հացը (Ղևտ. 23:19-25):

Բոլոր ընտրյալները նախասահմանված են Հիսուս Քրիստոսով (Եփես. 1:3-5): Նա ցորենի հատիկն էր, որ ընկավ հողի մեջ, մեռավ և շատ պտուղ բերեց (Հովհ. 12:24): Կատարելության

ժամանակ փրկագնվածները լինելու են հնձված ցորենը. *«Հոսելին Նրա ձեռքին է, և Նա Իր կալը կսրբի, իր ցորենը շտեմարանի մեջ կհավաքի, իսկ հարդն անանցանելի հրով կայրի»* (Մատթ.3:12):

Հետևյալ խոսքերը արդեն գրված էին Հին Կտակարանում մեր Փրկչի մասին փրկության ծրագրի վերաբերյալ. *«Ահա Իմ ծառան, որին ես հաստատել եմ, Իմ ընտրածը, որին հավանել է Իմ Հոգին, ես Իմ Հոգին դրել եմ նրա վրա, նա իրավունքը պիտի հանի ազգերի համար»* (Եսայի 42:1):

Հովհաննես Մկրտչի կողմից մկրտվելուց և ջրից դուրս գալուց հետո Աստծո Հոգին իջավ Նրա վրա. *«Եվ ահա երկնքից մի ձայն լսվեց, որ ասում էր. «Դա է իմ սիրելի Որդին, որին ես հավանեցի»* (Մատթ.3:17, Մարկ.1:11): Մինչև ջրով մկրտվելը Որդին ասաց. *«… որովհետև մեզ վայել է բոլոր արդարությունը կատարել»* (Մատթ. 17:5): «Մեզ» բառն այստեղ շատ կարևոր է: Մենք ներգրավված ենք որպես Աստծո որդիներ և դուստրեր: Ջրի մկրտությամբ հավատացյալները վկայում են իրենց Փրկչին ընդունելու մասին, իսկ Սուրբ Հոգու մկրտությամբ Աստված է վկայում փրկվագնվածներին ընդունելու մասին:

Այլակերպության լեռան վրա կատարվեց սա. *«Դա է իմ սիրելի Որդին, որին ես հավանում եմ: Նրան լսեցեք»* (Մատթ.17:5): *«…Նրան լսեցեք»*: Աստծո ճշմարիտ սերունդը հանձին Նրա բոլոր որդիների և դուստրերի հաճելի է Աստծուն և լսում է Նրան:

Հարսն ամբողջությամբ լիովին փրկագնված է և Աստծո առաջ ներկայացված անբիծ և Նրան հաճելի: Ինչպես Աստծո հաճությունը հանգչում էր Փրկչի վրա Նրա մարմնով հայտնված ժամանակ, այնպես էլ հիմա Նրա հաճությունը պիտի հանգչի Իր փրկագնած սեփական Եկեղեցու վրա, որը հաղորդ է եղել Նրա աստվածային բնությանը (2 Պետր. 1:4):

Առաքյալը հորդորում է մեզ. *«Եվ մի կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվեցեք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք թե ինչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին ու կատարյալը»* (Հռոմ. 12:2):

«Որովհետև Հոգու պտուղը ամենայն բարությամբ է, արդարությամբ և ճշմարտությամբ: Փորձեցեք, թե ինչն է Տիրոջ հաճելի (Եփես.5:9,10):

Առաքյալի համոզմունքը նաև իմ համոզմունքն է, այսինքն, որ բոլոր ընտրյալները ովքեր հիմա լսում են Աստծո Խոսքը և հավատում են դրան, Աստծո առաջ ընդունելի են դառնում. *«Ես ինքս համոզված եմ ձեր մասին, եղբայրներս, որ դուք բարությամբ ու ամեն <u>գիտությամբ լի եք,</u> և կարող եք իրար խրատել: Համենայն դեպս, <u>Աստծուց ինձ տրված շնորհի պատճառով</u> համարձակվեցի որպես հիշեցում որոշ հարցերի շուրջ գրել ձեզ, եղբայրներ, որ ես, Աստծո ավետարանը մատակարարելով, Հիսուս Քրիստոսի սպասավորը լինեմ հեթանոսների մոտ, <u>որպեսզի հեթանոսների նվիրումն ընդունելի լինի՝ Սուրբ Հոգով սրբված</u>»* (Հռոմ. 15:14, 15): Արդյունքն այդպիսին կլինի նաև հիմա՝ շնորհքի ժամանակաշրջանի վերջում: Որքան որ հաստատ է, որ Աստված Իր պատգամաբերին է ուղարկել, նույնքան հաստատ է, որ պատգամը կիրականացնի այն, ինչի համար ուղարկվել է: Եվ քանի որ դա Իր բերանից դուրս եկած Խոսքն է, պարապ չի վերադառնա Նրա մոտ, այլ կկատարի այն, ինչի համար Աստված ուղարկել է (Եսայի 55): Ամեն:

Եկեղեցու ամենակարևոր շրջանը՝ Հարսի շրջանը

Տեսնում ենք, որ աստվածաշնչյան մարգարեությունները իրականանում են բոլոր ոլորտներում: Իրոք վերջին ժամանակներն են և լավ կանենք, եթե լրջորեն ընդունենք մեր Տիրոջ ասածը. «… *երբ այս ամենը տեսնեք…»* (Մատթ.24:33, Մարկ.13:29, Ղուկաս 21:31):

Իրոք, տեսնում ենք այդ ամենը, ճանաչել ենք ժամանակների նշանը և պատգամը և կարող ենք բարձրացնել մեր գլուխները, որովհետև մեր մարմնի փրկությունը մոտենում է (Փիլիպ. 3:21):

Նա մեզ դիմում է այս խոսքերով. *«Ուրեմն արթուն կացեք և ամեն ժամանակ աղոթեցեք, որ արժանի լինեք այն բոլոր բաներից փրկվելու, որ տեղի են ունենալու, և կանգնելու Մարդու Որդու առաջ»* (Ղուկաս 21:36):

Հովհաննես առաքյալը մեզ ցույց է տվել ուսմունքի և Տիրոջ վերադարձի միջև եղած ուղղակի կապը. *«Բայց այն օծումը, որ Նրանից ընդունեցիք, ձեր մեջ է բնակվում: Եվ դուք պետք չունեք, որ մեկը ձեզ սովորեցնի, այլ ինչպես այն օծումը ձեզ սովորեցնում է ամեն բան, ճշմարիտ է և սուտ չէ, և ինչպես որ Նա ձեզ սովորեցրեց, մնացեք Նրա մեջ: Եվ այժմ, որդյակներ, մնացեք Նրա մեջ.որ երբ Նա հայտնվի, մենք համարձակություն ունենանք և Նրա գալու պահին Նրա առջև չամաչենք»* (1 Հովհ. 2:27, 28):

Այն բանից հետո, երբ Հովհաննես առաքյալը նկարագրեց մյուս բոլոր իրադարձությունները, նույնիսկ հարսանիքի ընթրիքը, սպիտակ աթոռի առջև դատաստանը, նոր երկինքն ու նոր երկիրը, նա նորից շեշտում է այն, ինչ մեր ժամանակների համար ամենակարևորն է՝ պատրաստ լինել և պատկանել հաղթողների խմբին. *«Ով որ հաղթի, ամբողջը կժառանգի, ու ես նրան Աստված կլինեմ, և նա ինձ համար որդի կլինի»* (հ. 7):

Կնիքների բացման միջոցով Աստծո փրկության ծրագրին պատկանող ամեն բան բացահայտվել է:

Վերջին գլխում Հովհաննեսին պատվիրվեց. *«Այս գրքի մարգարեության խոսքերը մի՛ կնքիր, որովհետև ժամանակը մոտ է»* (Հայտն.22:10): Իրոք, վերջնական իրականացման ժամանակը մոտ է, շատ մոտ: Իրականանում է նաև հետևյալը. *«Անիրավությունը գործողը թող ավելի անիրավանա, և կեղտոտը թող ավելի կեղտոտվի, և արդարը թող ավելի արդարանա, և սուրբը թող ավելի սրբանա»* (հ. 11):

Վերջում «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքը ուղղված է բոլոր նրանց, ովքեր աղաղակում են. «Մեր Տեր, արի»: *«Ահա շուտով գալիս եմ, և իմ վարձը՝ ինձ հետ, որ ամեն մեկին հատուցեմ ըստ իր գործերի: Ես եմ Ալֆան ու Օմեգան, Սկիզբն ու Վերջը, Առաջինն ու Վերջինը»* (Հայտն.22:12, 13): Դրան հաջորդում է երանության հռչակումը. *«Երանելի են նրա պատվիրանները պահողները, որովհետև նրանցը կլինի կյանքի ծառի վրա իշխանությունը, և քաղաքի դռնով ներս կմտնեն»* (հ. 14):

«Ուրեմն զգույշ լինենք, որ չլինի թե Նրա հանգիստը մտնելու մեզ տրված խոստումից ձեզնից որևէ մեկը զրկվի» (Եբր. 4:1):

Թող Աստված շնորհի այդ: Ամեն:

Բոլոր կրոնների միավորումը

Բոլոր բողոքական եկեղեցիների և հարանվանությունների միությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդում, ինչպես նաև լյութերական և կաթոլիկ եկեղեցիների միությունը առաջնային կարևորության խնդիր են դրանց ներկայացուցիչների համար: 2017 թվականի Ռեֆորմացիայի տարեդարձին ընդառաջ Վատիկանը կոչ է անում լյութերական եկեղեցուն հրապարակավ հրաժարվել Մարտին Լյութերի այն հայտարարությունից, որ պապը հակաքրիստոսն է: 1543 թվականին հրատարակված Աստվածաշնչի Դանիելի գրքի նախաբանում Լյութերը պապին անվանել է «endchrist» և «antichrist»: Նրանք ասում են, որ Ռեֆորմացիայի երկրում պետք է վերահաստատվի մեկ եկեղեցու միությունը: Բայց դա չի վերաբերում Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն: Նա արդեն մեկ է Քրիստոսի հետ, ով Գլուխն է: *«Ես նրանց մեջ, և Դու՝ Իմ մեջ, որ նրանք կատարյալ լինեն միության մեջ…»*: Աստծո զավակները ճանաչում են միայն մեկ սուրբ Հոր, ով երկնքում է: Նրանք աղոթում են. *«Հայր մեր, որ երկնքում ես, Քո անունը սուրբ լինի»*: Նրանք հնազանդվում են Փրկչի պատվիրանին. *«Եվ երկրիս վրա ոչ մեկին ձեզ «Հայր» չկոչեք, որովհետև ձեր Հայրը մեկն է՝ Նա, որ երկնքում է»* (Մատթ.23:9):

Սա համաշխարհային միավորումների ժամանակն է՝ տնտեսական, քաղաքական և կրոնական ոլորտներում: Չորրորդ՝վերջին համաշխարհային իշխանությունը՝ հռոմեական կայսրությունը ձևավորվում է մեր աչքերի առաջ և ինչպես գրված է, կփշրի ամբողջ երկիրը (Դանիել 7:23):

Խաղաղության գործընթացը

Սուրբ Գիրքը Հին և Նոր Կտակարանների բազմաթիվ հատվածներում հայտնում է մեզ վերջին ժամանակների իրադարձությունների մասին: Արդի համաշխարհային իրադարձությունները հստակ ցույց են տալիս, որ Քրիստոսի խոստացված վերադարձը շատ մոտ է: Բոլոր հայացքները հիմա ուղղված են հատկապես այն իրադարձություններին, որոնք տեղի են ունենում Մերձավոր Արևելքում՝ Իսրայելում, Իրանում, Սիրիայում: Ընթացիկ տեղեկությունները ամեն օր ցնցում են մեզ: Ավելի ու ավելի անհրաժեշտ են դառնում խաղաղության բանակցությունները, որոնցում Վատիկանը ներկայանում է որպես բոլորի կողմից ճանաչված համաշխարհային իշխանություն:

Մոտ է այն ժամանակը, երբ կասեն. *«խաղաղություն և ապահովություն է…»*: Բայց դա կլինի կեղծ խաղաղություն, որովհետև *«այն ժամանակ նրանց վրա կորուստը կհասնի»* (1 Թես.5:3):

«Վայ շատ ժողովուրդների բազմությանը որ գոռում են ծովերի գոռումի պես, և ժողովուրդների աղմուկին, որ աղմուկ են հանում սաստիկ ջրերի աղմուկի պես: Ազգերը շատ ջրերի աղմուկի պես աղմուկ են հանում, բայց նա նրանց հանդիմանելու է…» (Ես. 17:12, 13), երբ նրանք դուրս գան Իսրայելի և Երուսաղեմի դեմ. *«Եվ պիտի լինի, որ այն օրը ես Երուսաղեմը ծանր քար եմ շինելու բոլոր ազգերի համար. ամեն նրան բարձրացնողները պիտի անպատճառ ջարդվեն և նրա վրա պիտի ժողովվեն երկրի բոլոր ազգերը»* (Զաքարիա 12:3):

Կարիք չկա ավելին գրելու վերջին ժամանակների իրադարձությունների մասին: Բոլոր ոլորտներում ամեն բան գնում է իր հունով, նույնիսկ բնական աղետները: Մենք նորից ու նորից կարող ենք քաջալերել միմյանց. *«Եվ երբ այս բաներն սկսեն լինել, վերև նայեցեք ու ձեր գլուխները բարձրացրեք, որովհետև ձեր փրկությունը մոտ է»*:

Թող 1 Թես. 5-րդ գլխում գրվածը վերաբերի մեզ բոլորիս. *«Իսկ դուք, եղբայրներ, խավարի մեջ չեք, որ այն օրը գողի պես ձեզ վրա հասնի»* (հ.4): Աստծո ժողովուրդ, Գառնուկի Հարս, ահա Փեսան գալիս է, վեր կաց Նրան դիմավորելու: Մարանաթա:

«Քանի որ միայն մի քիչ էլ, և Նա, ով գալու է, կգա ու չի ուշանա» (Եբր. 10:37):

2012 թվականի վերջի կապակցությամբ

Տարիները գալիս և գնում են, ժամացույցները կարող են կանգ առնել, բայց ժամանակը գնում է: 2012 թվականը, որը մոտենում է ավարտին, ևս մեկ անչափ օրհնված տարի էր: Միսիոներական ճամփորդությունների միջոցով շատ թանկագին հոգիներ ավելացան Աստծո թագավորությունում: Հատկապես գոհանում ենք, որ հնարավորություն ունենք ողջ աշխարհում գտնվող անթիվ մարդկանց հասնել ինտերնետի միջոցով: Մինչև հիմա մեր ծառայությունների ուղիղ հեռարձակումների հետ միացումները գերազանցել են հազարը: Ամենամեծ տեղական եկեղեցին, որը միշտ առցանց միանում է մեզ Կոնգոյի դեմոկրատական հանրապետության Կոլվեզի քաղաքում է: Նրանց հովիվը՝ Մուամբա եղբայրը ասաց, որ հոկտեմբերի սկզբի հավաքույթների ժամանակ 3000-ից ավելի եղբայրներ ու քույրեր են ներկա եղել՝ հեռարձակմանը հետևելու համար: Նոյեմբեր ամսին առաջին շաբաթվա վերջի հավաքույթներին առաջին անգամ մեզ միացավ Մոնղոլիայի Ուլան Բատոր քաղաքում գտնվող եկեղեցին:

Իսկապես հրաշալի է, որ Աստված ամեն բանով ապահովել է, տվել է եղբայրներ, ովքեր հմուտ են տեխնիկայի տիրապետման մեջ, ինչպես նաև եղբայրներ և քույրեր, ովքեր սահուն խոսում են տարբեր լեզուներով, որպեսզի կարողանանք ծառայել ողջ աշխարհին 13 տարբեր լեզուներով, ձայնագրությամբ և տպագիր հրատարակություններով:

Ամեն ամիս ուղարկվող DVD սկավառակների քանակը գերազանցել է ինը հազարը: Հրաշալի է, որ ողջ աշխարհում մարդիկ կարող են նույն խոսքը լսել և ուղղակի կապ ունենալ այն բաների հետ ինչ Աստված խոստացել է և անում է ներկայում: Այսպիսով, Լրիվ Ավետարանի վերջին պատգամը հասնում է երկրի ծայրերը և հետո, ըստ Մատթ, 24:14 համարի համաձայն, կգա վերջը: Շնորհակալ եմ բոլոր նրանցից, ովքեր լրիվ կամ կրճատ աշխատաժամանակով ակտիվորեն մասնակցում են Աստծո գործին:

Նաև պարզապես աղոթքի տան համար շնորհակալ եմ Տիրոջս: Հիմնական դահլիճում տեղավորվում է 570 մարդ, եթե ավելացնենք ճաշարանը, կլինի 1000 տեղ: Ննջասրահները կարող են տեղավորել մոտ 400 եղբայրների և քույրերի, ովքեր հեռու տեղերից են գալիս ամեն ամսվա առաջին շաբաթվա վերջում տեղի ունեցող հավաքույթներին:

Քրիստոսով իմ սիրելի եղբայրներ և քույրեր, որ Նրա գործին մասնակցում եք ձեր հավատարիմ աջակցությամբ և աղոթքներով, սրտիս խորքից ձեզ շնորհակալություն եմ հայտնում:

Թող Աստված շարունակի օրհնել ամբողջ աշխարհում ծառայող բոլոր եղբայրներին, ովքեր մասնակցում են Խոսքի տարածմանը և Տիրոջ սեղանին են մատուցում թանկագին հոգևոր կերակուրը: Իմաստուն կույսերը հավատում են նաև Մատթ.24:45-47 համարներում Տիրոջ ասածին, մասնակից են այն գործին, որ Տերն անում է հիմա և վերջապես մտնելու են հարսանիքի սրահը (Մատթ. 25:10):

Այն, ինչ մեր Տերն ասաց Մատթեոսի ավետարանի վերջին գլխում ուժի մեջ է մինչև վերջ. *«Եվ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը»* (Մատթ. 28:20):

Այո, միշտ, ձեզանից յուրաքանչյուրի հետ: Ընդունեք դա հավատքով նույնիսկ ձեր ամենածանր փորձությունների ժամանակ: Նա խոստացել է, որ ամեն բան իրականացնելու է: Նա սկսել է, Նա էլ կավարտի: Նրան լինի փառքը հիմա և հավիտյան: Ամեն:

2013 թվականի համար բոլորիդ մաղթում եմ Աստծո առատ օրհնությունները Հիսուսի սուրբ Անունով:

Գործելով Աստծո հանձնարարությամբ՝

Էվալդ Ֆրանկ

2012 թվականի հունիսի 3-ի լուսանկար: 1960-ական թվականներից առանձնաշնորհում ենք ունեցել հազարավոր հավատացյալների մկրտելու սուրբգրային ձևով՝ Տեր Հիսուս Քրիստոսի Անունով: